



**«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների  
ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ /00098348-00101711 ծրագիր**

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Բնակչության սոցիալական խոցելիության գնահատման  
հիմնական մոտեցումները, չափորոշիչները և ցուցանիշների  
համակարգը**

**Սոցիալական խոցելիության գնահատման ազգային փորձագետ՝**

**Աստղիկ Միրզախանյան**

**Պայմանագրի ժամկետը՝ 21.02.2018 – 21.12.2018**

**Պայմանագրի համարը՝ LTA-2018-005**

**ԵՐԵՎԱՆ 2018**

## Բովանդակություն

Նախաբան .....	3
1. Առկա իրավական դաշտը .....	3
2. Բնակչության խոցելիության հետազոտությունները Հայաստանում .....	6
3. Խոցելիության գնահատման միջազգային փորձը .....	9
4. Խոցելի բնակչության ընտրության առաջարկվող մոդելը.....	11
5. Ընտանիքների խոցելիության գնահատման աշխատանքների կազմակերպումը.....	15
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշմամբ (04.03.2004) հաստատված խոցելի բնակչության ցանկ .....	17
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ կառավարության N1717 որոշմամբ (23.11.2006) հաստատված դեղերի ձեռք բերման համար արտոնություններ ունեցող խոցելի խմբերի ցանկեր .....	18
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՊՀ երկրների փորձը՝ բնակչության խոցելի խմբերին բնակարանային և կոմունալ ծառայությունների վճարման զեղչեր (արտոնություններ, սուբսիդիաներ) տրամադրելու հարցում .....	19
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Եվրոպական երկրների փորձը՝ բնակելի շենքերում էներգախնայող համակարգերի ներդրման հարցում.....	23

## Նախաբան

Կլիմայի Կանաչ Հիմնադրամի (ԿԿՀ) ֆինանսավորմամբ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից իրականացվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի (2017-2023) նպատակն է՝ **նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները** ՀՀ-ում առկա շենքերից, որտեղ կենտրոնացված են էներգիայի հիմնական սպառողները: Շենքերի էներգաարդյունավետության (ԷԱ) արդիականացման զուտ մասնագիտական և տեխնիկական խնդիրների լուծմանը զուգահեռ Ծրագրում կարևոր դեր է հատկացվում շենքերի բնակիչների որոշակի մասին ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցին՝ ապահովելով, որ **առավել խոցելի տնային տնտեսությունները կարողանան կատարել ԷԱ արդիականացման ծախսերը:**

Ուստի, Ծրագրի 4-րդ բաղադրիչի խնդիրներում ներառվել է նպատակային ֆինանսական արտոնությունների տրամադրումը խոցելի տնային տնտեսություններին, որոնց խոցելիության աստիճանի որոշման համար չափորոշիչների մշակման, այդ չափորոշիչներով նրանց գնահատման, հայտնաբերման և դասակարգման հետ կապված հետազոտական աշխատանքները նախատեսվել է իրականացնել սույն Տեխնիկական առաջադրանքի շրջանակներում:

## 1. Առկա իրավական դաշտը

Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում «բնակչության խոցելիությունը» որպես հասկացություն սահմանված չէ: Սակայն, ցանկացած սոցիալական ուղղվածություն ունեցող օրենք՝ ելնելով կարգավորվող տիրույթի առանձնահատկություններից, որոշարկում է բնակչության այն սոցիալական խմբերը, որոնց նկատմամբ պետությունն ու հասարակությունը պետք է ունենան հատուկ վերաբերմունք, ընդ որում նաև երաշխիքների (նյութական և ոչ նյութական) տրամադրման միջոցով:

Այսպես, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-231-Ն, 17.12.2014) օգտագործվում է «**կյանքի ռիսկերի իրավիճակ**» հասկացությունը, համաձայն որի, ըստ էության, խոցելի է համարվում այն անձը, որն ինքնուրույն չի կարող հաղթահարել՝

*«հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ*

*«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում»  
ՄԱՀԾ-ԿԿՀ/00098348-00101711 ծրագիր*

պարահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատագրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ»-ը:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-152-Ն, 11.12.2013) կիրառում է «**աշխատաշուկայում անմրցունակ անձ**» հասկացությունը, սահմանելով այդպիսի անձանց որոշարկման չափանիշները (ընդհանուր առմամբ 12 չափանիշ), որոնցից են, օրինակ՝

*մինչև երեք տարեկան երեխա ունենալը, ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալը, հաշմանդամությունը, փախստական լինելու հանգամանքը, նախակենսաթոշակային տարիքը, երկարատև գործազուրկի կարգավիճակում գտնվելը, առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելը, դատվածություն ունենալը, որևէ մասնագիտություն չունենալը, տրաֆիքինգի զոհ հանդիսանալը, բնակության վայրը (սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային) և այլն:*

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն, 22.12.2010) համաձայն, «**արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ**» է նշանակվում այն անձանց, որոնք, ըստ էության, խոցելի են համարվում, եթե 15 տարի անընդմեջ աշխատել են առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում:

«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-203-Ն, 01.12.2014) սահմանվել է «**սահմանամերձ համայնքների բնակչություն**» հասկացությունը, որի համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված համայնքներում մշտական բնակվող անձինք համարվում են խոցելի և պետական բյուջեի միջոցների հաշվին նրանց տրամադրվում է փոխհատուցում՝ սպառած բնական գազի, էլեկտրաէներգիայի և ոռոգման ջրի վարձավճարների 50%-ի չափով:

Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներով (յուրաքանչյուր տարի ընդունվում է հաջորդ տարվա բյուջեն) բազում ծրագրեր են հաստատվում բնակչության տարբեր խմբերի պետական աջակցության համար: Ընդհանուր առմամբ, **ավելի քան 50 սոցիալական ուղղվածություն ունեցող նպատակային ծրագրեր են ֆինանսավորվում պետական բյուջեից**, որոնցից են, օրինակ՝ երիտասարդ ընտանիքների բնակարանային հիփոթեկային վարկերի համաֆինանսավորումը, պատերազմի վետերանների առողջարանային հանգստի կազմակերպումը, սոցիալապես անապահով ընտանիքների վերարտադրողական խնդիրների ֆինանսավորումը, կենսաթոշակային ֆոնդերին երիտասարդ-մասնակիցների կողմից կատարվող պարտադիր վճարների համաֆինանսավորումը, թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց հոգեբանական վերականգնողական ծառայությունների անվճար տրամադրումը և այլն:

Այնուհետև, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով առավել մանրամասն նկարագրվում են այն չափորոշիչները, որոնք հիմք են ծառայում անձին որպես խոցելի, անապահով, տվյալ ծրագրի շահառու և այլն որոշարկելու համար:

Խոցելիության գնահատման համակարգի տեսակետից **հիմնարար է** համարվում ընտանիքների անապահովության գնահատման կարգը, որը հաստատվել է ՀՀ կառավարության «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» **N145-Ն որոշմամբ** (30.01.2014): Որոշման Հավելված 2-ով սահմանվել են բնակչության 19 սոցիալական խմբեր և հաստատվել դրանց անապահովության միավորները, որոնք հետևյալն են.

<b>Սոցիալական խմբի անվանումը</b>	<b>Անապահովության միավորը</b>
1) հաշմանդամության I խումբ ունեցող անձ	48
2) հաշմանդամության II խումբ ունեցող անձ	39
3) հաշմանդամության III խումբ ունեցող անձ	28
4) հաշմանդամություն ունեցող երեխա	45
5) երեխա՝ մինչև 5 տարեկանը լրանալը	35
6) երեխա՝ 5 տարեկանից մինչև 18 տարեկանը լրանալը	33
7) միակողմանի ծնողազուրկ երեխա	43
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխա	50
9) միայնակ մոր երեխա	30
10) ամուսնալուծված անձի երեխա	26
11) ուսանող՝ մինչև 23 տարեկան	22
12) չափահաս անձ՝ մինչև 19 տարեկան	30
13) հղի կին (12 շաբաթական և ավելի ժամկետով)	35
14) գործազուրկ	17
15) առանձին խմբի գործազուրկ	22
15.1) խնամքին երեխա ունեցող կին	17
15.2) աշխատող անձ	17
16) կենսաթոշակառու	36
17) միայնակ չաշխատող կենսաթոշակառու	37
18) տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր)	39
19) ընտանիքի «բացակա» կամ որևէ սոցիալական խումբ չունեցող անդամ	15

Մեկ այլ որոշմամբ (N1144-Ն, 18.12.2014) ՀՀ կառավարությունը հաստատել է թվով **25 սահմանամերձ համայնքների ցանկը**, որոնցում մշտապես բնակվող բնակչությունը հաշվառվում է որպես հատուկ խումբ և նրանց ցուցակները տրամադրվում են համապատասխան մարմիններին՝ **արտոնյալ սակագներ և հարկավճարներ** կիրառելու նպատակով:

ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N1122-Ն որոշմամբ հաստատվեց ևս մեկ ցանկ՝ ընտանիքների անապահովության համակարգում ընդգրկված և **20.00 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքները** սկսած 2017 թվականի հունվարի 1-ից նվազ սակագնով են վճարելու սպառված գազի և էլեկտրաէներգիայի համար:

**Առողջապահական ծառայությունների անվճար և արտոնյալ պայմաններով օգտվելու** համար ՀՀ կառավարությունը «Պետության կողմից երաշխավորված

անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշմամբ (04.03.2004) հաստատել է **խոցելի բնակչության մեկ այլ ցանկ, որի մեջ ընդգրկված են 25 սոցիալական խմբեր** (Հավելված 1), իսկ ՀՀ կառավարության N1717 (23.11.2006) որոշմամբ առանձնացվել են 3 տիպի խոցելի խմբեր, որոնք ունեն արտոնություններ դեղերի ձեռք բերման հարցում (Հավելված 2):

ՀՀ կառավարության N1183-Ն որոշմամբ (27.07.2006) պետությունն ուսանողական նպաստի ձևով **ուսման վճարի լրիվ փոխհատուցում** է տրամադրում առանց ծնողական խնամքի մնացած **ԲՈՒՀ-երի ուսանողներին** և նրանց թվին պատկանող անձանց, հաշմանդամ երեխաներին, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամներին, զոհված զինծառայողի երեխա-ուսանողին, պարտադիր զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողին: 2012 և 2015 թվականներին նշված կարգում լրացումներ կատարվեցին և սոցիալապես անապահով ընտանիքներում հաշվառված երեխաները ստացան **որոշակի (50-ից 100%) ուսման վարձի փոխհատուցումների** հնարավորություն՝ կապված ընտանիքի անապահովության միավորից և ուսման առաջադիմությունից:

Բացի նյութական/դրամական աջակցությունից, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով բնակչության որոշակի/խոցելի խմբերին տրամադրվում են անվճար (պետական բյուջեից ֆինանսավորվող) սոցիալական, բժշկական, հոգեբանական, իրավաբանական և այլ տիպի ծառայություններ:

Այսպիսով, խոցելի բնակչության սոցիալական խմբերը բազմազան են, սակայն **առանցքային դերը, այնուամենայնիվ, պատկանում է ընտանիքների անապահովության համակարգին**, որում ընդգրկվելու և ընտանեկան նպաստ ստանալու չափորոշիչներն ու ցուցանիշները կիրառելի են բոլոր տեսակի պետական սոցիալական աջակցության ծրագրերի համար:

## 2. Բնակչության խոցելիության հետազոտությունները Հայաստանում

Բնակչության խոցելիությունը մեր երկրում ուսումնասիրվել է դեռևս **խորհրդային ժամանակաշրջանում**. սկսած 70-ական թվականներից, յուրաքանչյուր տարի վիճակագրության պետական կոմիտեն ընտանեկան բյուջեների ուսումնասիրությունների միջոցով հաշվարկում էր **ցածր վաստակ ունեցող և չունևոր ընտանիքների (низкооплачиваемые и малоимущие семьи)** տեսակարար կշիռը և նկարագրում էր այդ ընտանիքների հիմնական բնութագրիչները: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձևավորվում էին բնակչության խոցելի սոցիալական խմբերը (շուրջ՝ 22 խումբ), որոնց տրամադրվում էր տարբեր տեսակի պետական սոցիալական աջակցություն, այն է՝ եկամտահարկի արտոնություններ, դրամական նպաստներ, կոմունալ վճարների զեղչեր և այլն, ընդհուպ մինչև արտահերթ բնակարանային ապահովում: Այս հետազոտությունները կողմնորոշում էին պետությանը նաև սոցիալական քաղաքականության կարևորագույն լծակների՝ նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների,

կրթաթոշակների, սպառողական գների, ինչպես նաև տարատեսակ արտոնությունների չափերի որոշման հարցում:

Անկախության տարիներին, երբ քաղաքական առումով հնարավոր դարձավ «աղքատություն» տերմինի օգտագործումը, Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ **ընտանեկան բյուջեների վիճակագրական հետազոտությունները** վերածվեցին **տնային տնտեսությունների հետազոտությունների**, իսկ «**ցածր վաստակ**» հասկացությունը փոխարինվեց «**աղքատ**» և «**աղքատություն**» տերմիններով: 1996 թվականից ի վեր ՀՀ վիճակագրության ազգային ծառայությունը (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) հրապարակում է «**Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը**» տարեկան զեկույցը, որտեղ մանրամասն ներկայացված են երկրի մակարդակով աղքատության ազգային հետազոտությունների մեթոդաբանությունը և հարուստ վիճակագրական տեղեկատվություն՝ տնային տնտեսությունների և բնակչության աղքատության մակարդակների և հիմնական բնութագրիչների վերաբերյալ<sup>1</sup>: Համաձայն նշված հետազոտությունների գաղափարական հիմքերի՝ **աղքատությունը համարվում է բնակչության խոցելիության ամենածանր դրսևորումը**, ինչը պահանջում է գնահատման բազմաչափ գործիքակազմ:

Ավելին, 2013 թվականից սկսած Համաշխարհային բանկի մասնագետների հետ համատեղ ՀՀ ԱՎԾ-ն նախաձեռնեց աղքատության գնահատմանը զուգահեռ (ի լրումն գործող մեթոդաբանությանը)<sup>2</sup>՝ այսպես կոչված «**բազմաչափ աղքատության գնահատման**» համակարգի ներդրումը<sup>2</sup>: Այն հիմնված է բնակչության և ընտանիքների **զրկանքների բնութագրման վրա**՝ որոշակի չափումների և ցուցանիշների միջոցով: Բազմաչափ աղքատության գնահատման մեթոդաբանությունը էապես տարբեր է, սակայն դրա հիման վրա հաշվարկված «**զրկանքներ կրող ընտանիքների**» տեսակարար կշիռը շատ չի տարբերվում «**աղքատ ընտանիքների**» տեսակարար կշռից: Բազմաչափ աղքատության հաշվարկներն առաջին անգամ ներկայացվել են 2016 թվականին՝ «**Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը**» վիճակագրական ժողովածույում:

<sup>1</sup> Չեկույցը հասանելի է [www.armstat.am](http://www.armstat.am) կայք-էջի «Հրապարակումներ» դարանում: 2017 թվականի զեկույցը, որի տվյալները վերաբերում են 2016 թվականի ընթացքում իրականացված հետազոտության արդյունքներին առկա է <http://www.armstat.am/am/?nid=82&id=1988> ինտերնետային էջում:

<sup>2</sup> Բազմաչափ աղքատությունը գնահատելու համար հաշվի է առնվում «...տվյալ երկրի համատեքստը՝ աղքատության առանձին բնութագրերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ մի շարք քննարկումների արդյունքում: Թեև այս մոտեցումը սահմանափակում է աղքատության գնահատականի միջազգային համադրելիությունը, դրա ավելացված արժեքը հենց իրենց՝ Հայաստանի բնակիչների կողմից ներկայացված կարծիքն է զրկանքների վերաբերյալ: Օրինակ, Հայաստանում գազի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման արդյունքում շատ տնային տնտեսություններ ստիպված էին ավելի մեծ գումարներ հատկացնել ջեռուցման համար: Միևնույն ժամանակ, էապես աճել է այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնք այժմ տունը ջեռուցելու համար փայտ կամ ածուխ են օգտագործում: Աղքատության մակարդակը նշված հանգամանքներով ձևավորելու պարագայում «առողջ ջեռուցման» հնարավորությունից զրկված լինելը բազմաչափ աղքատության չափումներից մեկն է»: «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 72: <http://www.armstat.am/am/?nid=82&id=1988>

Հետաքրքրական է, որ Հայաստանում բազմաչափ աղքատությունը գնահատելու համար ընտրված հիմնական կարիքների շարքում մեծ տեղ է հատկացվել «առողջ ջեռուցում» չափմանը, իսկ որպես ցուցանիշ կիրառվել է հետևյալ պնդումը. «տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե որպես ջեռուցման աղբյուր օգտագործում է փայտ, ածուխ կամ այլ միջոցներ»:<sup>3</sup> Բանն այն է, որ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությունների վիճակագրական վերլուծությունները (այդ թվում՝ կոռելյացիոն կապերի հաշվարկումը) վկայում է այն մասին, որ Հայաստանում գազի և էլեկտրաէներգիայի սակագների շարունակական բարձրացման արդյունքում շատ ընտանիքներ՝ ջեռուցման համար ավելի մեծ գումարներ հատկացնելու համար հնարավորություններ չունենալու պատճառով՝ տները (անգամ բնակարանները) ջեռուցելու համար սկսում են օգտագործել փայտ, ածուխ կամ այլ միջոցներ: Այսպես, 2010-2015թթ. ընթացքում կացարանների ջեռուցման համար գազի օգտագործման մասնաբաժինը նվազել է 57.1%-ից մինչև 40.2%, այն դեպքում, երբ փայտինը ավելացել է 25.8%-ից 35.9%:<sup>4</sup>

Խոցելիության և աղքատության յուրահատուկ հետազոտություններ են իրականացվել նաև ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի տեխնիկական աջակցությամբ: Վերջիններիս հիմքում դրված էր ՄԱԿ-ի կողմից որդեգրած **մարդկային զարգացման** համընդհանուր տեսլականը, որի ներքո ձևավորվեց նաև «**մարդկային աղքատություն**» հասկացությունը: Այսպես, «**Աղքատության սոցիալական ցուցիչները**» (1998թ.), «**Մարդկային աղքատությունը ՀՀ մարզերում**» (2004թ.), «**Գյուղական աղքատությունը ՀՀ մարզերում**» (2004թ.), «**Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում**» (2005թ.) և մի շարք այլ զեկույցներում և տեղեկատվական-վերլուծական պարբերականներում ամփոփված և ներկայացված են բնակչության համար կրթության, առողջապահության, բնակարանային և կոմունալ պայմանների, ինչպես նաև հանրային մի շարք ծառայությունների մատչելիության, դրանց ֆիզիկական հասանելիության, որակի և այլ չափորոշիչների գծով իրականացված հետազոտությունների արդյունքները: Հավաքագրված տվյալների հիման վրա **հաշվարկված են աղքատության և խոցելիության տարաբնույթ համաթվեր՝** այդ թվում մարզային կտրվածքով, որոնք հիմք հանդիսացան միջազգային դոնոր կազմակերպությունների և կառավարության սոցիալական ծրագրերի հասցեականության բարձրացմանը<sup>5</sup>:

Վերը թվարկված հետազոտությունների արդյունքները վերհանեցին որոշակի խնդիրներ, որոնք պահանջեցին առավել խորքային ուսումնասիրություններ՝ դրանց պատճառա-հետևանքային կապերի հայտնաբերման ուղղությամբ: Խոցելիության տարանջատված (disaggregated) տվյալներ ստանալու և առանձնահատուկ խոցելի խմբեր որոշարկելու նպատակով իրականացվեցին մի շարք նպատակային

<sup>3</sup> Նույն տեղում, գլուխ 3.9, աղյուսակ 3.18:

<sup>4</sup> Նույն տեղում, աղյուսակ 10.10:

<sup>5</sup> “Human Poverty and Pro-Poor policies in Armenia”, UNDP/RA Government, 2005

<http://www.gov.am/files/library/7.pdf>,

“Social Protection and Social Inclusion in Armenia”, European Commission/CRRC, 2010

<http://ec.europa.eu/social/BlobServlet?docId=6882&langId=en>



թեմատիկ հետազոտություններ: Դրանցից ամենածավալունն ու նշանակալիինը՝ **Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի ազգային ընտրանքային հետազոտությունն է (DHS)**, որն առաջին անգամ իրականացվեց 2000 թվականին և կրկնվում է 5 տարին մեկ: Վերջին (չորրորդ) հետազոտությունը կատարվել է 2015-2016թթ., որի շրջանակում հավաքագրվել և վերլուծվել են ժողովրդագրության հետ առնչվող առողջապահական հիմնական ցուցանիշները, ինչպես նաև բնակչության առողջության վրա ազդող կարևորագույն ցուցիչները<sup>6</sup>:

2016 թվականի ապրիլ-մայիսին Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ իրականացվեց **Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման հետազոտությունը (ASPIS)**, որի հիմնական թիրախը՝ ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններն էին: Հետազոտության արդյունքներն օգտագործվում են ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի կատարելագործման, խոցելի խմբերի անապահովության միավորների վերանայման և ընտանեկան նպաստների հասցեականության բարելավման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ներկայումս ընթացող աշխատանքներում<sup>7</sup>:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում **շարունակաբար իրականացվում են բնակչության խոցելի խմբերի աղքատության հետազոտություններ**, պարբերաբար թարմացվում են սոցիալական վիճակագրական տվյալների շտեմարանները, իսկ թիրախային-թեմատիկ հետազոտությունների միջոցով նաև ընդլայնվում է տվյալների տարանջատվածության մակարդակն ու **հարստացվում է աղքատության և խոցելիության գնահատման համար անհրաժեշտ չափորոշիչների, ցուցիչների և ցուցանիշների համակարգերը**:

### 3. Խոցելիության գնահատման միջազգային փորձը

Բնակչության խոցելիության հասկացությունը միջազգային իրավունքում առանցքային տեղ է գրավում: ՄԱԿ-ի մի շարք կոնվենցիաներում կիրառվում են «խոցելիություն», «խոցելի խմբեր», «խոցելի իրավիճակներ» և նմանատիպ հասկացություններ, որոնք օգտագործվում են քաղաքականություն մշակողների և որոշումներ ընդունողների ուշադրությունը հրավիրելու և միջոցներ ձեռնարկելու՝ բնակչության որոշակի խմբերի և առանձնահատուկ իրավիճակների ուղղությամբ:

Այսպես օրինակ, **Երեխաների իրավունքների կոնվենցիայի (1989թ.)** մասնակից-պետությունները որպես առավել խոցելի համարել են փոքր տարիքի

<sup>6</sup> «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն 2015-16», Երևան, 2017 <http://www.armstat.am/am/?nid=82&id=1942>

<sup>7</sup> Տե՛ս՝ Համաշխարհային բանկի կարծիքը «Տնային տնտեսությունների անապահովության գնահատման մեթոդաբանության մեջ փոփոխություններ անելու մասին» ՀՀ կառավարության տեղեկանքի վերաբերյալ, 23 դեկտեմբեր, 2016թ:

աղջիկներին, որոնք մեծ հավանականությամբ վտանգված են սեռական շահագործման: **Աշխատավոր միգրանտների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայում (1990թ.)** նշվում են այն խոցելի իրավիճակները, որում հաճախակի հայտնվում են միգրանտները՝ այլ երկրներում աշխատելիս: **Բռնի անհետանալուց բոլոր անձանց պաշտպանության միջազգային կոնվենցիան (2006թ.)** հորդորում է պետություններին առավել խիստ պատասխանատվության ենթարկել հղի կանանց, հաշմանդամների, տարեց կանանց և երեխաների նկատմամբ բռնություն կատարած անձանց:

Հաշմանդամները, տարեցները, կանայք, բնածին և մարդածին աղետներից տուժած անձինք, երեխաները՝ հիմնական այն խոցելի խմբերն են, որոնք միջազգային իրավունքի բազմաթիվ փաստաթղթերում ճանաչված են որպես առավել խոցելի և պետական աջակցության համար թիրախ-խմբեր: Հետևաբար, **միջազգային կոնվենցիաներին միացած պետություններում խոցելիության գնահատման և խոցելի խմբերի որոշարկման մեթոդները շատ չեն տարբերվում միմյանցից, քանի որ մշակված են միջազգայնորեն ընդունված սկզբունքային հիմքերի վրա:**

Անշուշտ, կան առանձնահատուկ խոցելի խմբեր, որոնք բնորոշ են տվյալ երկրին՝ ելնելով պատմական, մշակութային, ազգային, բնակլիմայական և այլ յուրովի գործոնների առկայությունից: Այդպիսիք են, օրինակ, Հայրենական Մեծ պատերազմի վետերանները, Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի պայթյունից տուժած քաղաքացիները, ստալինյան քաղաքական ռեպրեսիաներից տուժածներն ու նրանց ժառանգները, սոցիալիստական աշխատանքի հերոսները և/կամ աշխատանքի վետերանները, հյուսիսային կամ բարձրլեռնային կամ սահմանամերձ տարածքների բնակիչները և այլն, որոնք գրեթե բոլոր ԱՊՀ երկրներում ընդգրկված են տարբեր տեսակի պետական աջակցության ծրագրերում:

Տվյալ ծրագրի նպատակներից և խնդիրներից ելնելով՝ **այլ երկրներում խոցելիության գնահատման փորձը ուսումնասիրվել է հատկապես բնակարանային և կոմունալ ծառայությունների գծով բնակչության որոշակի սոցիալական խմբերին զեղչեր, արտոնություններ և սուբսիդիաներ տրամադրելու տեսանկյունից**, որը մանրամասն ներկայացված է Հավելված 3-ում:

Ինչ վերաբերում է Եվրամիության անդամ երկրների կողմից իրականացվող նմանատիպ ծրագրերի իրականացման փորձին, ապա այն էապես տարբերվում է ԱՊՀ երկրներում կիրառվող մոտեցումներից՝ ուղղակիորեն չանդրադառնալով խոցելի ընտանիքների որոշարկման և աջակցության խնդրին (տե՛ս Հավելված 4):

#### 4. Խոցելի բնակչության ընտրության առաջարկվող մոդելը

Խոցելի բնակչության խմբերի աշխարհում առկա համակարգերն ունեն **մեկ կարևոր առանձնահատկություն՝** դրանք կիրառվում են արդեն իսկ դժվար ֆինանսական իրավիճակում հայտնված ընտանիքների կենսամակարդակի անկումը կանխելու կամ մեղմելու համար: Ավելին, խոցելի բնակչությանը տրամադրվող արտոնությունները (զեղչերը, սուբսիդիաները, փոխհատուցումները և այլն) որպես կանոն անժամկետ են կամ պարբերական են՝ որոշակի ժամկետի մեջ:

Սույն Տեխնիկական առաջադրանքի խնդիրների լուծման համար նկարագրված և ոչ մի համակարգ **չի կարող նույնությամբ** կիրառվել այն խոցելի ընտանիքների ընտրության համար, որոնց Ծրագրի շրջանակում նախատեսվելու է ֆինանսական աջակցություն ցուցաբերել ԷԱ արդիականացման ծախսեր կատարելու համար: Ըստ էության, տվյալ ֆինանսական աջակցությունը լինելու է միանվագ, նպատակաուղղված և տրվելու է ոչ թե անապահով ընտանիքի կենսամակարդակը (այսինքն՝ առօրյա սպառումների հնարավորությունները) որոշ չափով բարձրացնելու, այլ նպատակային կապիտալ ծախս կատարելու ընտանիքի վճարունակությունը ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից, Ծրագրի շահառուների խոցելիության գնահատումը պետք է հիմնված լինի ոչ միայն ընտանիքի անդամների սոցիալական խմբերի, այլև մեկ շնչին ընկնող միջին եկամտի չափանիշի վրա: Նշանակում է, առաջարկվող **համակարգը պետք է կառուցվի երկու զուգակցվող սկզբունքի՝ ընտանիքի անապահովության (պայմանականորեն՝ բացարձակ աղքատություն) և կապիտալ ծախսեր կատարելու անկարողության (պայմանականորեն՝ հարաբերական աղքատություն) վրա:**

Ստորև ներկայացվում են Ծրագրի ֆինանսական աջակցության բաղադրիչի շահառուների ընտրության չափորոշիչները, այդպիսի ընտանիքների դասակարգումը՝ ըստ խոցելիության աստիճանի, ինչպես նաև ընտանիքի անդամների և համախառն եկամտի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները:

**Ծրագրի շրջանակներում՝ ընտանիքների խոցելիության գնահատման հիմնական և լրացուցիչ չափորոշիչներն՝  
ըստ խոցելիության աստիճանի**

Ընտանիքի խոցելիության աստիճանը՝ սկսած ամենախոցելիներից	խոցելիության չափորոշիչները		Տեղեկատվության աղբյուրը (ները)		Ընտանիքի խոցելիության գնահատումը	Այլ նշումներ
	հիմնական	լրացուցիչ	հիմնական	լրացուցիչ		
1	2	3	4	5	6	7
<b>1-ին աստիճան</b>						
1. Ընտանիքների անապահովության համակարգում հաշվառվածներ (բացարձակ աղքատներ)	ա. ընտանիքը ստանում է ընտանեկան նպաստ  բ. ընտանիքն ունի 20.01-ից 30.00 անապահովության միավոր  ՀՀ կառավարության «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N145-Ն որոշմանը (30.01.2014) համապատասխան:	նպաստ ստացած ամիսների քանակը՝ սկսած 2015 թ-ից  2015-2017թթ.-ին ստացել է նպաստ և քանի ամիս	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Փարոս» տվյալների բազա: 2018 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ «Փարոս» համակարգում հաշվառված է ընդամենը 122397 ընտանիք, որից 100293-ը ստանում է ընտանեկան նպաստ, իսկ 15869-ի անապահովության միավորը 20.01-ից 30.00 է:	Լրացուցիչ տեղեկատվության աղբյուրի կարիք չկա	Ծրագրում ընդգրկված բազմաբնակարան շենքերի հասցեները տրամադրվում են ՀՀ ԱԱՀՆ՝ այդ հասցեներով բնակվող նպաստառու և «Փարոսում» հաշվառված 20.01-ից 30.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու նպատակով:	Նշված ընտանիքների ցանկերը առկա են նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան սոցիալական աջակցության տարածքային ծառայությունում:  Եթե ընտանիքը 2015-2017թթ-ին ստացել է ընտանեկան նպաստ, ապա անհրաժեշտ է տեղեկատվություն նրան նպաստից գրկելու հիմքերի վերաբերյալ:
2. Ընտանիքների անապահովության համակարգում հաշվառվածներ	ընտանիքն ունի 0-ից 30.00 անապահովության միավոր և 2015-2017թթ-ին ոչ մի ամիս չի ստացել ընտանեկան նպաստ:	ա. անչափահաս երեխա (ներ) ունեցող միայնակ ծնողի ընտանիք  բ. հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Փարոս» տվյալների բազա: 2018 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ «Փարոս» համակարգում	Լրացուցիչ տեղեկատվության աղբյուրի կարիք չկա	Ծրագրում ընդգրկված բազմաբնակարան շենքերի հասցեները տրամադրվում են ՀՀ ԱԱՀՆ՝ այդ հասցեներով բնակվող «Փարոս»-ում հաշվառված 0-ից 30.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու նպատակով:	Նշված ընտանիքների վերաբերյալ անհրաժեշտ է տեղեկատվություն, թե ինչու խոցելի անդամ ունեցող ընտանիքի անապահովության միավորը թույլ չի տվել նպաստ ստանալ:

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների դիսկերի նվազեցում»  
ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348-00101711 ծրագիր

	<p>ՀՀ կառավարության «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N145-Ն որոշմանը (30.01.2014) համապատասխան::</p>	<p>գ. միայն թոշակառուներից բաղկացած ընտանիք</p>	<p>հաշվառված է 22104 ընտանիք, որոնց անապահովության միավորը 0-ից 30.00 է:</p>			<p>Հետագայում այդ տեղեկատվությունը կօգտագործվի նման ընտանիքների խոցելիության աստիճանը ճշտելու համար:</p>
<p><b>2-րդ աստիճան</b></p> <p>3. Սոցիալական խոցելի խմբին պատկանող անձ (անձինք) ունեցող ընտանիքներ</p>	<p>Ընտանիքների անապահովության գնահատման համար օգտագործվող սոցիալական խմբեր՝ դասակարգված ըստ անապահովության միավորի</p> <p>ՀՀ կառավարության «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N145-Ն որոշման (30.01.2014) Հավելված 2-ով սահմանված:</p>	<p>Ընտանիքի ընդհանուր կազմում սոցիալական խոցելի խմբերին պատկանող անձանց տեսակարար կշիռը</p>	<p>Շենքերի համատիրություններից ստացված տվյալները՝ յուրաքանչյուր բնակարանում բնակվող տնային տնտեսության կազմի մասին</p>	<p>ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տվյալների բազա</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվական վերլուծական կենտրոնի տարատեսակ շտեմարանները («Գործ», «Փյունիկ», «Կենսաթոշակ» և այլն)</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ՝ ԷԱ արդիականացման բաղադրիչի պոտենցիալ համատիրությունները ներկայացնում են բնակիչների ցանկերը՝ ըստ նախապես մշակված ձևաչափի:</p>	<p>Ներկայացված ցուցակներում ընդգրկված անձանց վերաբերյալ որոշակի տվյալները անհրաժեշտության դեպքում համադրվում են նշված պետական մարմինների շտեմարաններում առկա տվյալների հետ:</p>
<p><b>3-րդ աստիճան</b></p> <p>4. Երիտասարդ ընտանիք</p>	<p>ՀՀ կառավարության «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի</p>	<p>Ընտանիքի կազմը և համախառն եկամտի</p>	<p>Ծրագրի շահառու հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակիչների</p>	<p>Շենքի համատիրության տվյալները՝ տվյալ շենքի բնակիչների</p>	<p>Համատիրության կողմից ներկայացված ցանկից ընտրվում են, ըստ անհրաժեշտության, երիտասարդ ընտանիքներ, որոնց շրջանում կատարվում է փոքր հարցում՝ տարիքը,</p>	<p>Կախված շենքի բնակիչների ընդհանուր թվում 1-ին և 2-րդ աստիճանի խոցելի ընտանիքների</p>

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների դիսկերի նվազեցում»  
 ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348-00101711 ծրագիր

	բնակարան» պետական նպատակային ծրագրով հաստատված (29.01.2010թ., N98-Ն որոշում) չափորոշիչներին բավարարող երիտասարդ ընտանիքներ	մեծությունը	հարցման միջոցով ստացված տեղեկատվական բազա	մասին  «Ն ոստիկանության բնակչության պետական ռեգիստր  «Վ պետեկամուտների կոմիտեի «Հարկատու 3» տվյալների բազա	ընտանիքի կազմը և եկամուտները պարզելու նպատակով:	տեսակարար կշռից՝ կորոշվեն լրացուցիչ չափորոշիչների սահմանային արժեքները: Օրինակ, մեկ կամ երկու անչափահաս երեխա ունեցող երիտասարդ ընտանիքներ, որոնց համախառն զուտ եկամուտը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի քառապատիկը (55 հազար դրամ) և այլն:
5. Ազատամարտիկի ընտանիք կամ հաշմանդամ (զոհված) ազատամարտիկ անդամ ունեցող ընտանիք	«Երկրապահ կամավորականի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով (19.06.2013թ., ՀՕ-75-Ն) սահմանված կարգով ազատամարտիկ (երկրապահ կամավորական) ճանաչված անձ	Ընտանիքի կազմը և համախառն եկամտի մեծությունը	Ծրագրի շահառու հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակիչների հարցման միջոցով ստացված տեղեկատվական բազա	Շենքի համատիրության տվյալները՝ տվյալ շենքի բնակիչների մասին  «Ն ոստիկանության բնակչության պետական ռեգիստր  «Վ պետեկամուտների կոմիտեի «Հարկատու 3» տվյալների բազա  «Վ պաշտպանության նախարարության համապատասխան հանձնաժողովի հաշվառման մատյանը	Համատիրության կողմից ներկայացված ցանկից ընտրվում են, ըստ անհրաժեշտության, ազատամարտիկների ընտանիքներ, որոնց շրջանում կատարվում է փոքր հարցում՝ ընտանիքի կազմը և եկամուտները պարզելու նպատակով:	Կախված շենքի բնակիչների ընդհանուր թվում 1-ին և 2-րդ աստիճանի խոցելի ընտանիքների տեսակարար կշռից՝ կորոշվեն լրացուցիչ չափորոշիչների սահմանային արժեքները: Օրինակ, անչափահաս երեխաների քանակը, կամ հաշմանդամ (զոհված) ազատամարտիկի ընտանիքի կազմում սոցիալական խոցելի խմբերին պատկանող անձանց թիվը, ծնողների տարիքը, ընտանիքի համախառն եկամտի չափը և այլն:

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների դիսկերի նվազեցում»  
ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348-00101711 ծրագիր

## 5. Ընտանիքների խոցելիության գնահատման աշխատանքների կազմակերպումը

Ծրագրի շահառու (կամ պոտենցիալ շահառու) ընտրված բազմաբնակարան շենքերում բնակվող ընտանիքների խոցելիության գնահատման աշխատանքները կազմակերպելու համար առաջարկվում են հետևյալ գործողությունների հաջորդական իրականացումը:

Նախևառաջ, ըստ **նախապես մշակված ձևաչափի** պետք է հավաքագրվի և ամփոփվի Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի բնակիչների (ըստ բնակարանների) ընտանիքին վերաբերող տեղեկատվությունը: Վերջինս, ըստ անհրաժեշտության, պետք է համադրվի պետական վարչական տարբեր (վերոդրյալ Աղյուսակում նշված) վարչական ռեգիստրներում / շտեմարաններում / տվյալների բազաներում առկա տեղեկատվության հետ: Բնականաբար, համադրվում են միայն այն անձանց վերաբերյալ տվյալները, որոնք համապատասխանում են Աղյուսակում բերված խոցելիության հիմնական և լրացուցիչ չափորոշիչներին:

Այնուհետև, ընտանիքների կազմի, դրանցում առկա՝ որպես չափորոշիչ ընտրված սոցիալական խմբերի ներկայացուցիչների, անհրաժեշտության դեպքում՝ նաև ընտանիքի համախառն եկամտի մասին տեղեկատվության հիման վրա ընտանիքները դասակարգվում են ըստ խոցելիության աստիճանի՝ սկսած ամենախոցելիներից (այսինքն՝ 1-ին աստիճանի խոցելի ընտանիքներից) մինչև 3-րդ աստիճանի խոցելի ընտանիքները:

Եթե 1-ին աստիճանի խոցելի ընտանիքների տեսակարար կշիռը տվյալ բազմաբնակարան շենքում հավասար կամ մեծ է ընտանիքների ընդհանուր թվի 1/5-րդից, ապա հետագա ուսումնասիրություններ այլևս չեն կատարվում: Հակառակ դեպքում կատարվում է 2-րդ աստիճանի խոցելիություն ունեցող ընտանիքների խոցելիության գնահատում: Որպես գնահատման հիմք ընդունվում են ՀՀ կառավարության «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N145-Ն որոշմամբ հաստատված **սոցիալական խմբերի միավորների գումարը** (տե՛ս սույն զեկույցի 3-րդ էջում բերված աղյուսակը), ինչպես նաև ընտանիքի կազմում որպես չափորոշիչ ընտրված սոցիալական խմբերին պատկանող անձանց **տեսակարար կշիռը**:

Եթե 1-ին և 2-րդ աստիճանների խոցելիություն ունեցող ընտանիքների հանրագումարը բազմաբնակարան շենքի ընտանիքների ընդհանուր թվում հավասար կամ մեծ է 1/5-րդ-ից, ապա ուսումնասիրությունները դադարեցվում են: Հակառակ դեպքում կատարվում է 3-րդ աստիճանի խոցելիություն ունեցող ընտանիքների գնահատումն ու դասակարգումը՝ ըստ ընտանիքի համախառն եկամտի մեծության:

Ընտանիքների խոցելիության առաջարկվող հիմնական և լրացուցիչ չափորոշիչներն, ինչպես նաև նրանց գնահատման և դասակարգման առաջարկվող մեխանիզմները նախապես պետք է փորձարկվեն Ծրագրի պոտենցիալ շահառու որևէ բազմաբնակարան շենքի բնակիչների շրջանում: Փորձարկումն իրականացվելու է առնվազն տասը խոցելի տնային տնտեսություններում հարցում կազմակերպելու միջոցով:

Հարցման արդյունքները կօգտագործվեն.

ա. սոցիալական խմբերի ընտրության համար առաջարկված չափորոշիչների ճշգրտման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանց ցանկի ավելացման,

բ. ընտանիքի կազմ հասկացության սահմանման,

գ. համախառն եկամտի նվազագույն չափի որոշման,

դ. ընտանիքի կազմում խոցելի սոցիալական խմբերի նվազագույն տեսակարար կշռի սահմանման,

ե. խոցելիության գնահատման առաջարկվող համակարգի կիրառման մեխանիզմները բարելավելու համար:



## **ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշմամբ (04.03.2004) հաստատված խոցելի բնակչության ցանկ**

1. Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ
2. 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք
3. 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք
4. 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք
5. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք
6. Վերարտադրության տարիքի կանայք՝ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում
7. Մինչև 7 տարեկան երեխաներ
8. Հաշմանդամություն ունեցող երեխաներ՝ մինչև 18 տարեկան
9. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ՝ մինչև 18 տարեկան, և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք՝ 18-23 տարեկան
10. Մինչև 8 տարեկան և 12 տարեկան երեխաներ, ինչպես նաև 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք՝ մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնության մասով
11. Հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքների երեխաներ՝ մինչև 18 տարեկան
12. Բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ
13. Մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաներ
14. Միաձնող երեխաներ՝ մինչև 18 տարեկան
15. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվողներ
16. 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն, իսկ զորակոչային տարիքի անձանց՝ նաև հիվանդանոցային փորձաքննություն)
17. Չինձառայողներ և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքների անդամներ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինձառայողների ընտանիքների անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինձառայողներ
18. Փրկարարական ծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատված փրկարարական ծառայողներ, հաշմանդամ դարձած փրկարարական ծառայողներ, ծառայության ընթացքում զոհված (մահացած) փրկարարական ծառայողների ընտանիքների անդամներ
19. Ձերբակալվածներ, կալանավորված անձինք և ազատազրկման դատապարտվածներ
20. Մանկատներում, ծերանոցներում և անօթևանների ժամանակավոր կացարաններում խնամվող անձինք
21. Բռնադատվածներ
22. Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ
23. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք
24. Ապաստան հայցողներն ու նրանց ընտանիքների անդամները
25. Չինձառայության ընթացքում ստացած խելման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ովքեր բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից կազմված վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներում)

*«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում»*

*ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348-00101711 ծրագիր*

**ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ կառավարության N1717 որոշմամբ (23.11.2006)  
հաստատված դեղերի ձեռք բերման համար արտոնություններ ունեցող  
խոցելի խմբերի ցանկեր**

**1. Հիվանդության դեպքում դեղերը տրվում են անվճար բնակչության հետևյալ  
սոցիալական խմբերին պատկանող անձանց՝**

1. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ
2. հաշմանդամ երեխաներ (մինչև 18 տարեկան)
3. Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք
4. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաներ (մինչև 18 տարեկան)
5. բազմազավակ (մինչև 18 տարեկան չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ
6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ
7. հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաներ (մինչև 18 տարեկան)
8. մինչև 7 տարեկան երեխաներ

**2. Հիվանդության դեպքում դեղերը տրվում են 50% զեղչով բնակչության հետևյալ  
սոցիալական խմբերին պատկանող անձանց՝**

1. 3-րդ խմբի հաշմանդամներ
2. Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ
3. բռնադատվածներ
4. միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ
5. միայն չաշխատող կենսաթոշակառուներից բաղկացած (այդ թվում՝ իրենց խնամքի տակ անչափահաս երեխա ունեցող) ընտանիքներ
6. միայնակ մայրերի երեխաներ (մինչև 18 տարեկան)

**3. Հիվանդության դեպքում չաշխատող կենսաթոշակառուներին դեղերը տրվում  
են 30% զեղչով:**

### **ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՊՀ երկրների փորձը՝ բնակչության խոցելի խմբերին բնակարանային և կոմունալ ծառայությունների վճարման գեղչեր (արտոնություններ, սուբսիդիաներ) տրամադրելու հարցում**

Ամբողջ աշխարհում <<քաղաքակրթության բարիքներ>> համարվող անվտանգ խմելու ջրի, կենտրոնական ջեռուցման և տաք ջրի, բնական գազի, ջրահեռացման, շենքերի և դրանց հարող տարածքների բարեկարգման և այլ բնակարանային և կոմունալ ծառայությունների դիմաց բնակիչների վճարումների դրույքաչափերն անընդհատ աճի միտում ունեն: Սակայն ոչ բոլոր բնակիչների մեկ շնչին ընկնող եկամուտները նույն համամասնությամբ են աճում, իսկ որոշներինը՝ բոլորովին չեն աճում: **Սոցիալական պետությունները (եվրոպական, ԱՊՀ) այդպիսի բնակիչներին համարում են խոցելի և կիրառում են օրենսդրությամբ սահմանված գեղչերի, արտոնությունների կամ սուբսիդիաների հստակ համակարգեր՝ քաղաքացիների վճարումների բեռը թեթևացնելու նպատակով:**

Ստորև ներկայացված են մի շարք երկրներում ներկայումս գործող այդպիսի համակարգերը՝ ըստ բնակչության խոցելի խմբերի:

#### **Ռուսաստանի Դաշնություն**

Համաձայն ՌԴ գործող օրենսդրության բնակչության հետևյալ խմբերն են համարվում խոցելի և/կամ անապահով և իրավունք ունեն դիմելու տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ)՝ դրանց կողմից սահմանված արտոնություններ ստանալու համար.

- 1) 3 և ավելի անչափահաս երեխա դաստիարակող ընտանիքներ
- 2) Հայրենական Մեծ պատերազմի (ՀՄՊ) մասնակիցներ
- 3) ուղղակի գործողությունների վետերաններ
- 4) պետական և զինվորական ծառայողներ
- 5) աշխատանքի վետերաններ
- 6) հաշմանդամ ճանաչված բլոկադային Լենինգրադի բնակիչներ
- 7) Սոցիալիստական աշխատանքի հերոսներ
- 8) Աշխատանքային Փառքի շքանշանակիրներ
- 9) ԽՍՀՄ և Ռուսաստանի պատվավոր դոնորներ
- 10) Չեռնոբիլի ԱԷԿ-ի ճառագայթման ազդեցությունից տուժած և հաշմանդամություն ունեցող երկրի բնակիչներ /ռեզիդենտներ/
- 11) թիկունքի աշխատավորություն
- 12) քաղաքական ռեպրեսիաներից տուժած անձինք
- 13) ՀՄՊ մասնակիցների, վետերանների և մահացած հաշմանդամների ընտանիքի անդամներ

14) հաշմանդամներ

15) չաշխատող կենսաթոշակառուներ:

Ձեռքերի տեսակներն ու չափերը տարբերվում են թվարկված խմբերի համար և կարող են կախված լինել նաև. ա) ընտանիքի չնչային եկամտի մեծությունից, բ) բնակարանի մակերեսից, գ) կոմունալ ծախսերի նորմատիվային բազայից (այսպես կոչված տարածքային ստանդարտներից), ինչպես նաև տվյալ ՏԻՄ-ի կողմից ընդունված իրավական ակտերից:

Մասնավորապես, **3 և ավելի երեխա ունեցող ընտանիքը** կարող է օգտվել զեղչերի համակարգից, եթե ընտանիքի գումարային եկամուտը՝ պակասեցված 22%-ով (կոմունալ ծախսերի նորմատիվն է ընտանեկան համախառն բյուջեում) և բաժանված ընտանիքի անդամների թվի վրա պակաս է օրենսդրությամբ հաստատված կենսապահովման նվազագույն մակարդակից:

Ձեռքերի գործող համակարգի համաձայն, **կենսաթոշակառուների** կոմունալ՝ գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի և ջրահեռացման ծառայությունների համար վճարումների հաշիվները կարող են նվազեցվել, իսկ 2018 թ.-ի հունվարի 1-ից **չաշխատող կենսաթոշակառուները** կարող են դիմել ՏԻՄ՝ բնակարանի գազաֆիկացման նպատակով նյութական օգնություն ստանալու համար:

**Հաշմանդամություն ունեցող անձանց** նախատեսված է 50% զեղչ էլեկտրաէներգիայի և հեռախոսակապի ամսավճարի, ինչպես նաև անշարժ գույքի հարկի համար, ընդ որում վերջինից բոլորովին ազատված են **I-ին և II-րդ կարգի հաշմանդամները**:

Բազմաբնակարան շենքերի կապիտալ վերանորոգման ամսական վճարներից ազատված են **80 տարին բոլորած բնակիչները**, իսկ **I-ին և II-րդ կարգի հաշմանդամները, մանկուց հաշմանդամ երեխա խնամող ընտանիքները և 70 և ավելի տարեկան միայնակ կենսաթոշակառուները** մուծում են այդ վճարի 50%-ը միայն<sup>8</sup>:

**Աշխատանքի վետերաններն** օգտվում են աղքատության, ջեռուցման, գազի, ջրի և էլեկտրաէներգիայի համար սահմանված ամսական վարձերի նվազեցումներից:

**ՏԻՄ-ը իրավասու է** սահմանել զեղչերի տեսակներն ու չափերը՝ ելնելով իր բյուջեի հնարավորություններից:

Ինչ վերաբերում է բնակարանային և կոմունալ կապիտալ ծախսերի (շենքի կապիտալ վերանորոգում, ընդհանուր խողովակների փոխում և այլն) համար տրվող

<sup>8</sup> Տե՛ս <https://doorinworld.ru/stati/lgoty-zhkkh-v-2016-godu-poslednie-novosti>

**սուբսիդիաներին**, ապա դրանք տրամադրվում են բացառապես **սակավապահով ընտանիքներին**, ելնելով կենսապահովման նվազագույն չափորոշիչներից, որոնք եռամսյակային կտրվածքով հաշվարկվում են տարբեր սոցիալական խմբերի համար՝ նվազագույն սպառողական զամբյուղի և սպառողական գների համաթվի հիման վրա: **Հատուկ բանաձևի** կիրառմամբ, հաշվարկվում է սակավապահով ընտանիքին տրամադրվելիք սուբսիդիայի չափը<sup>9</sup>:

### **Ուկրաինա**

2017 թվականին Ուկրաինայի օրենսդիրը հաստատեց այն **խոցելի խմբերի ցանկը**, որոնք կարող են օգտվել կոմունալ վճարների **25, 50 և 100% զեղչերից**: Օրենսդրությամբ սահմանվեց նաև, որ զեղչերը կարող են տրամադրվել նշված խմբերին՝ **հաշվի առնելով կամ հաշվի չառնելով ընտանիքի կամ անձի եկամուտը**: Սահմանվեց նաև, որ զեղչերը կարող են տրամադրվել տվյալ կոմունալ ծառայության համար սահմանված **սպառման որոշակի ստանդարտից ելնելով, կամ առանց ստանդարտի կիրառման**<sup>10</sup>:

Օրենքի կիրարկումը դրվեց **ՏԻՄ-երի վրա**, որոնք՝ ելնելով յուրաքանչյուրն իր հնարավորություններից, պետք է մանրամասներ և հաստատեր խոցելի խմբերից յուրաքանչյուրի համար զեղչերի համակարգը և դրանց հաշվարկման հիմքերը:

### **Բելառուս**

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Բելառուսի մայրաքաղաքի բնակիչների ավելի քան 5%-ը, կամ շուրջ 100 հազար բնակիչ օգտվում էր Մինսկի քաղաքային իշխանությունների կողմից սահմանված կոմունալ վճարների արտոնություններից: Արտոնություններից օգտվող սոցիալական խմբերն են.

- 1) Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները,
- 2) պատերազմի հաշմանդամները,
- 3) զինվորական և պետական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած չաշխատող կենսաթոշակառուները,
- 4) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, եթե չունեն աշխատունակ ընտանիքի անդամ, որը պարտավոր է իրենց խնամել, կամ բնակվում են միայնակ կամ անաշխատունակ ընտանիքի անդամի (անդամների) հետ համատեղ,

Թվարկված սոցիալական խմբերն ունեն **50% զեղչ**՝ բոլոր տեսակի կոմունալ վճարների համար, սակայն վերջինս կիրառվում է միայն նորմատիվային ծախսը չգերազանցող չափաքանակի վրա: Նորմատիվից ավելին ծախսված էլեկտրաէներգիան, գազը, ջուրը վճարվում են 100% սակագնով: Նորմատիվները սահմանվել են 2007 թվականին՝ Մինսկի քաղաքապետարանի կողմից:

<sup>9</sup> <http://www.webohrannik.ru/vseokomynalke/subsidiigkx.html>

<sup>10</sup> <http://forum.domik.ua/subsidi-i-oformlenie-prava-usloviya-polucheniya-t28982.html#p980954>

Միաժամանակ, 2014 թվականին Բելառուսի Նախարարների Խորհուրդը ընդունել է որոշում (որը գործում է հանրապետության ամբողջ տարածքում)՝ պետական բնակելի ֆոնդից օգտվող բնակիչների որոշակի խմբերին կոմունալ ծառայությունների դիմաց վճարների համար զեղչեր տրամադրելու մասին: Այսպես,

- 1) բազմազավակ, 3 և ավելի անշափահաս ունեցող, խնամատար, խնամակալ ընտանիքները,
- 2) ընտանեկան տիպի ոչ պետական մանկական տները,
- 3) երեխա ունեցող հաշմանդամ ծնողների ընտանիքները,
- 4) մեկ ծնողով հաշմանդամ երեխա խնամող ընտանիքները:

**20% զեղչով** են վճարում կոմունալ ծախսերի ամբողջ ծավալը՝ անկախ նորմատիվային ծախսաչափից<sup>11</sup>:

ԱՊՀ այլ երկրների փորձը գրեթե չի տարբերվում երեք խոշոր՝ Ռուսաստան, Ուկրաինա և Բելառուս հանրապետություններում կիրառվող զեղչերի համակարգից: Ինչ վերաբերում է աշխարհի այլ, ոչ հարուստ, երկրներին, ապա **Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF)** կայքում<sup>12</sup> ամփոփված են բնակչության սոցիալական պաշտպանության որոշ մեխանիզմներ, որոնք կիրառվել են բարեփոխումներ իրականացնող երկրներում՝ սոցիալական հետևանքները մեղմելու համար: Օրինակ, **Հորդանանում** 2013 թվականի օգոստոսին իրականացված էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումը չտարածվեց տնային տնտեսությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի սակագնի վրա, իսկ 2014-ի և 2015-ի հունվար ամիսներից՝ բարձրացված սակագնով սկսեցին վճարել միայն բարձր եկամուտ ունեցող ընտանիքները: Վառելիքի գների բարձրացումից սակավապահով ընտանիքներին պաշտպանելու նպատակով Հորդանանի կառավարությունը, սկսած 2012 թվականի նոյեմբերից, 70% կազմող սակավապահով ընտանիքներին (որոնց տարեկան եկամուտը չի գերազանցում 10000 դինարը կամ 14700 ԱՄՆ դոլարը) վճարում է տարեկան մեկ շնչի հաշվով 100 ԱՄՆ դոլար սուբսիդիա, բայց ոչ ավել, քան 600 ԱՄՆ դոլար:

Այսպիսով, գրեթե բոլոր սոցիալական և ոչ բարձր կենսամակարդակով բնակչություն ունեցող պետություններում կիրառվում են զեղչերի և/կամ սուբսիդիաների համակարգեր՝ բնակչության խոցելի խմբերին էներգակիրների գների թանկացումից ֆինանսապես պաշտպանելու նպատակով:

<sup>11</sup> <http://pravo.by/novosti/obshchestvenno-politicheskie-i-v-oblasti-prava/2018/january/27166/>

<sup>12</sup> <https://www.imf.org/external/np/exr/facts/rus/protectr.pdf>

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. Եվրոպական երկրների փորձը՝ բնակելի շենքերում էներգախնայող համակարգերի ներդրման հարցում

Արևմտյան Եվրոպան, ի տարբերություն ԱՊՀ երկրների, այլ ճանապարհ է ընտրել իր բնակիչներին՝ էներգակիրների մշտական թանկացումներից և աճող ծախսերից պաշտպանելու համար: Եթե ԱՊՀ երկրներում բյուջեի (պետական, համայնքային) գումարները նախատեսվում և հատկապես ծախսվում են խոցելի բնակչությանը որոշակի արտոնություններ՝ զեղչեր, սուբսիդիաներ և այլն, տրամադրելու և այդ միջոցով կոնկրետ ընտանիքների բնակարանային և կոմունալ ամսավճարների բեռը թեթևացնելու համար, ապա զարգացած եվրոպական երկրներն իրենց առջև գլոբալ խնդիր են դրել՝ **մինչև 2050 թվականը բոլոր բնակելի շենքերում ներդնել ժամանակակից էներգաարդյունավետ համակարգեր, ինչը թույլ կտա ոչ միայն խնայել տնային տնտեսությունների կոմունալ ծախսերը, այլև բարելավել էկոլոգիական իրավիճակը՝ ապահովելով բոլոր բնակիչների համար առողջ ապրելու միջավայր:**

Այդ նպատակին հասնելու համար ԵՄ երկրները մշակում և բյուջետավորում են էներգաարդյունավետ Ազգային Ծրագրեր՝ որպես նպատակ ունենալով յուրաքանչյուր տարի բնակելի ֆոնդի առնվազն 3%-ի հիմնանորոգումը<sup>13</sup>: Ծրագրի բյուջեն որպես կանոն կազմված է պետական, համայնքային և մասնավոր ներդրումներից: Երկրներն ազատ են Ծրագրի իրականացման մեխանիզմների ընտրության և կիրառման հարցում:

ԵՄ քաղաքական մոտեցումները շենքերի էներգախնայողության հարցում բավականին հստակ են և ներառում են 4 հիմնական ուղղություն.

1. Օրենսդրական կարգավորումներ,
2. Տնտեսական և շուկայական մեխանիզմների կիրառում,
3. Ֆինանսական գործիքների, ներառյալ խրախուսող, օգտագործում,
4. Տեղեկատվական աջակցություն՝ այդ թվում կամավոր նախաձեռնություններ:

Ուսումնասիրելով մի շարք եվրոպական երկրների փորձը վերոնշյալ ուղղությունների պրակտիկ իրագործման տեսանկյունից, կարող ենք եզրակացնել, որ դրանք ոչ մի առնչություն չունեն խոցելի բնակչության հայտնաբերման,

<sup>13</sup> European Commission Directive 2012/27/EU (Energy Efficiency Directive). Տե՛ս նաև. “Existing Building Energy Efficiency Renovation: International Review and Regulatory Policies” IPEEC Building Energy Efficiency Task group [https://ipeec.org/upload/publication\\_related\\_language/pdf/651.pdf](https://ipeec.org/upload/publication_related_language/pdf/651.pdf) /Overview/

խոցելիության աստիճանի գնահատման և, հետևաբար, խոցելի ընտանիքների ֆինանսական աջակցության տրամադրման նպատակադրումների հետ<sup>14</sup>: Միակ տարբերակումը, որը կիրառվել է հատկապես Նիդեռլանդներում և Գերմանիայում՝ դա սոցիալական շենքերում էներգախնայող համակարգերի ներդրման համար առաջարկվող վարկային ռեսուրսի համեմատաբար մեղմ պայմաններն են, ինչը արդարացված է ոչ այնքան շենքի բնակիչների սոցիալական կարգավիճակով, որքան քարոզարշավի վրա ծախսվելիք գումարի գրեթե զրոյական մակարդակով (շենքի սեփականատերը բնակիչները չեն):

Ֆինանսական խթանների օգտագործումն առավել դյուրին է հատկապես հասարակական շենքերի վերանորոգման դեպքում, եթե դրանք պատկանում են պետությանը կամ համայնքին կամ մեկ սեփականատիրոջը, քանի որ այս պարագայում կոմունալ վճարների պարտականությունը ամբողջ կառույցի համար կրում է սեփականատերը:

Այսպիսով, էներգախնայող համակարգերի ներդրման ծրագրերի իրականացման ԵՄ երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ կամ խոցելի բնակիչներին ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդիրն առկա չէ որպես ծրագրի նպատակադրում, կամ տվյալ խնդրի լուծման մասին տեղեկատվությունը բացակայում է հետազոտական գրականությունում:

---

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ. Teresa Parejo-Navajas “The energy improvement of the urban existing building stock: a proposal for action arising from best practice examples” (2017)  
<http://columbiacimatelaw.com/files/2017/06/Parejo-2017-05-Energy-Improvement-of-Existing-Urban-Building-Stock.pdf>  
Kalle Kuusk, Targo Kalamees “Estonian Grant scheme for renovating apartment buildings” (2016)  
<https://www.sciencedirect.com/science/article/pii/S1876610216307524/Estonia/>